ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/91

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Երվադա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3412-2022 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 21.02.2022թ.-ի 02/16.4/1532-2022 գրության հիման վրա, 28.02.2022թ.-ին «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.02.2022թ.-ին:

28.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/91 համարի ծածկագիրը:

09.03.2022թ.-ին, 18.03.2022թ.-ին և 25.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2022թ.-ին:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 21.02.2022թ.-ի 02/16.4/1532-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 7-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև <<Երվադա>> և <<ԱԳԱՌ-777>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, ինչպես նաև՝ <<Տ-Քնսթրաքշն>> և <<Էնջինիրինգ>> փակ բաժնետիրական ընկերությունները այսուհետ՝ (Ընկերություններ):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերություններին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջիններիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Ընկերությունների կողմից խախտվել են Կարգի 42-րդ և հրավերի 8.10 կետերով սահմանված պայմանները, ինչի հիման վրա հայտերը մերժվել են:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերությունների տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Երվադա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Երվադա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3412-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Երվադա» ՍՊԸ-ն 23.03.2022թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2022/91 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ:

«Երվադա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13

ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգին): Վերոհիշյալ ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 17.01.2022թ.:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից հայտով չի ներկայացվել ծավալաթերթ-նախահաշիվը, Հավելված 1.2-ի մասով՝ Մասնակցի կողմից չի ներկայացվել սարքերի և սարքավորումների վերաբերյալ Հավելված N 1.2-ը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներ ընդհանրապես չեն ներկայացվել:

Արդյունքում հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Տվյալ ընթացակարգով բոլոր արձանագրությունները հրապարակվել են www.gnumner.am պաշտոնական կայքում միայն 24.02.2022թ.:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգին): Վերոհիշյալ ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 17.01.2022թ.:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից հայտով չի ներկայացվել ծավալաթերթ-նախահաշիվը, Հավելված 1.2-ի մասով՝ Մասնակցի կողմից չի ներկայացվել սարքերի և սարքավորումների վերաբերյալ Հավելված N 1.2-ը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներ ընդհանրապես չեն ներկայացվել:

Արդյունքում հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Միևնույն ժամանակ տվյալ ընթացակարգով բոլոր արձանագրությունները հրապարակվել են www.gnumner.am պաշտոնական կայքում միայն 24.02.2022թ.:

«Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2022/91 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1. Բողոքներ քննող ածին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Երվադա» ՍՊԸ-ն 10.02.2022թ. մինչև 18.02.2022թ. «Երվադա» ՍՊԸ-ին պատկանող Armeps համակարգի համապատասխան էջից որևէ տեսակի ոչ ավտոմատ ծանուցումներ Ընկերությունը չի ստացել: Սույն դիրքորոշմանը կցվում է գնման ընթացակարգերի ցանկը՝ համապատասխան ժամանակահատվածով, որոնց շրջանակներում ընկերությունը որևէ ծանուցում Armeps համակարգից չի ստացել:

Վերոհիշյալ խնդրի կապակցությամբ Ընկերությունը հայտնել է ՀՀ ֆինանսների նախարարությանը /գրությունը կցվում է/, որով նասնավորապես հայտնվել է հետևյալը.

«Վերջին շրջանում «Երվադա» ՍՊԸ-ն մասնակցության հայտեր է ներկայացրել բազմաթիվ պետական գնման ընթացակարգերին /ցանկը կցվում է/ և վերը նշված Ընթացակարգերից չեն ստացել որևէ տեսակի ծանուցումներ կամ արձանագրություններ;

Նշված խնդիրը ի հայտ է եկել այն ժամանակ, երբ զանգ է կատարվել Պատվիրատուներից մեկի ներկայացուցչին՝ ճշտելու Ընթացակարգի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն, որին ի պատասխան համակարգողը հայտնել է, որ արդեն իսկ ուղարկվել է ոչ ավտոմատ ծանուցում բոլոր մասնակիցներին՝ այդ թվում նաև «Երվադա» ՍՊԸ-ին:

«Երվադա» ՍՊԸ-ն գրեթե 1 /մեկ/ շաբաթից ավել ժամանակահատվածում չի ստանում որևէ տեսակի ոչ ավտոմատ ծանուցումներ՝ մինչդեռ վտանգված է Ընկերության հետագա գործունեությունը: Ընկերությունը ունի նաև կասկած, որ միգուցե «ջարդել են» Ընկերությանը պատկանող Armeps համակարգի էջը, ուստի՝ խնդրում ենք՝

1. Բարձրացված հարցը վերցնել Ձեր անմիջական հսկողության ներքո:

2. Հանձնարարել կատարել armeps համակարգում «Երվադա» ՍՊԸ-ի էջի ուսումնասիրություն՝ պարզելու համար առաջացած խնդրի պատճառները:

3. Հայտնել, վերջին 10 օրվա ընթացքում Երևան քաղաքի որ տարածքից է կատարվել մուտք Ընկերությանը պատկանող Armeps համակարգի էջ (տեղեկատվություն IP վերաբերյալ):

4. Հայտնել, թե կից ներկայացված ընթացակարգերով արդյոք «Երվադա» ՍՊԸ-ին armeps համակարգի միջոցով ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխան գրությամբ /կցվում է/ հայտնել է հետևյալը.

««Երվադա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի «ervada» մուտքանունով օգտվողի կողմից (էլ.փոստ՝ ervada-spy@mail.ru) գրությամբ ներկայացրած ժամանակահատվածում տարբեր IP հասցեներից իրականացվել են բազմաթիվ ձախողված մուտքի փորձեր, ինչի արդյունքում համակարգը ապաակտիվացրել է օգտվողի կայք-էջը:

Համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 10/02/2022թ. ժամը 15:19-ից մինչև ժամը 16:11-ը 178.176.73.225, 109.252.73.161 և 91.196.39.22 IP հասցեներից իրականացվել է թվով 28 ձախողված մուտքի փորձ, ապաակտիվացնելով կայք-էջը: Ընկերության կողմից՝ նոր գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով՝ գրավոր դիմում ներկայացնելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարությունը

10/02/2022թ. ժամը 17:50-ին ընկերությանը փրամադրել է նոր գաղտնաբառ, որով՝ նույն օրը ժամը 17:53-ին վերոգրյալ օգտվողի կողմից 91.196.39.22 IP հասցեից իրականացվել է «Խմբագրել օգտվողին», իսկ ժամը 19:11-ին և ժամը 19:21-ին «Բեռնել հայտի փաթեթը» գործառույթները: Այնուհետև, 11/02/2002թ. ժամը 09:39-ից մինչև ժամը 09:53-ը 109.252.73.161 IP հասցեից իրականացվել է թվով 70 ձախողված մուտքի փորձ՝ կրկին ապաակտիվացնելով կայք-էջը, ձախողված մուտքի փորձ է իրականացվել նաև 18/02/2022թ. ժամը 15:08-ին 46.70.132.249 IP հասցեից: Նոր գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով գրավոր դիմումի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը 18/02/2022թ. ժամը 16:18-ին ընկերությանը կրկին տրամադրել է նոր գաղտնաբառ, որով՝ նույն օրը ժամը 16:35-ին վերոգրյալ օգտվողի կողմից 46.70.132.249 IP հասցեից իրականացվել է «Խմբագրել օգտվողին», իսկ ժամը 16:40-ին «Ավելացնել օգտվող» գործառույթները՝ ընկերության կայք-էջում ավելացնելով «mhererervada2005» մուտքանունով օգտվողին (էլ.փոստ՝ ervada@mail.ru):

Տեղեկացնում ենք նաև, որ armeps համակարգից առաքվող ոչ ավտոմատ ծանուցումները ստանում են միայն ակտիվ կարգավիճակ ունեցող օգտվողները: Ուստի վերոգրյալ ժամանակահատվածում վերոգրյալ օգտվողը ոչ ավտոմատ ծանուցումներ չէր կարող ստանալ համակարգից՝ ապաակտիվացված կարգավիճակ ունենալու պատճառով:

ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրությունից պարզ է դառնում, որ «Երվադա» ՍՊԸ-ն 10.03.2022թ. մինչև 18.03.2022թ. չի ստացել որևէ ծանուցում ոչ մի ընթացակարգով՝ ՍՊԸ-ի էջի ոչ ակտիվ կարգավիճակ ունենալու պատճառով, և համապատասխանաբար ՍՊԸ-ն նշված ընթացակարգի շրջանակներում չի ստացել հանձնաժողովի 11.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի հիման վրա «Երվադա» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այստեղ առկա չի եղել «Երվադա» ՍՊԸ-ի մեղքը, և համապատասխանաբար, եթե ՍՊԸ-ն ստանար համապատասխան ծանուցումը, ապա անպայման կկատարեր շտկումը: Ավելին, սույն գրությանը կցված ընթացակարգերի ցանկը, վկայում է, որ «Երվադա» ՍՊԸ-ն առաջացած, ըստ երևույթի միտումնավոր միջամտության հետևանքով ոչ միայն զրկվել է տվյալ ընթացակարգերով իր հետագա մասնակցության իրավունքից, այլ նաև վերոհիշյալ խնդիրը տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Գտնում ենք, որ վերոհիշյալ միտումնավոր միջամտությունը նպատակ է ունեցել վնասել «Երվադա» ՍՊԸ-ին, քանի որ վերոհիշյալի արդյունքում ՍՊԸ-ն մրցույթներով զրկվել

է իր հետագա մասնակցությունից, և տեսականորեն դա հնարավոր էր անել, քանի որ «Երվադա» ՍՊԸ-ի armeps համակարգում ուներ հեշտ կռահվող օգտատերի անուն, այն է՝ ervada:

Տեղեկացնում ենք նաև, որ «Երվադա» ՍՊԸ-ն, դիտարկելով կատարվածը որպես ՍՊԸ-ի հանդեպ իրականացված հանցավոր արարք, 22.02.2022թ. ՀՀ ոստիկանության Էրեբունիի բաժին ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում /դիմումի պատճենը կցվում է/՝ խնդրելով հայտնաբերել մեղավորներին և ենթարկել համապատասխան պատասխանատվության:

2. Բացի այդ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ կարևոր հանգամանք: Տվյալ ընթացակարգերով բոլոր արձանագրությունները՝ թե հայտերի բացման նիստի, թե հայտերի գնահատման նիստի արձանագրությունները հրապարակվել են www.gnumner.am պաշտոնական կայքում միայն 24.02.2022թ., և նման պարագայում «Երվադա» ՍՊԸ-ն չեր կարող անգամ www.gnumner.am պաշտոնական կայքից տեղեկանար, որ 11.02.2022թ. տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությամբ ՍՊԸ-ին տրվել է շտկում, քանի որ վերոհիշյալ արձանագրությունը, որով արձանագրվել է անհամապատասխանություն, հրապարակվել է կայքում միայն 13 օր անց:

Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքը իմպերատիվ պահանջում է, որպեսզի հայտերի թե բացման, թե գնահատման արձանագրությունները հրապարակվեն www.gnumner.am պաշտոնական կայքում նիստին հաջորդող օրը, ինչը տվյալ դեպքում չի կատարվել, իսկ արձանագրությունները հրապարակվել են հայտերը բացելուց հետո 1,5 ամիս անց:

Նման պարագայում «Երվադա» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված էր իրեն հասանելի ցանկացած եղանակով իր հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ որևէ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

3. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ կարևոր հանգամանք.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջների խախտում, քանի որ հայտերի բացման և գնահատման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ., սակայն ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանությունը արձանագրվել է միայն 11.02.2022թ., իսկ մերժվել է միայն 16.02.2022թ., այսինքն սահմանված 10 աշխատանքային օրվա խախտմամբ, որի պայմաններում գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու մասին որոշումը չի կարող դիտարկվել որպես իրավաչափ:

Այս տեսանկյունից խախտվել է նաև «Երվադա» ՍՊԸ-ի լեգետիմ ակնկալիքը, քանի որ 17.01.2022թ. հետո «Երվադա» ՍՊԸ-ն լեգետիմորեն ակնկալում էր, որ եթե հայտում առկա էր անհամապատասխանություն, ապա ՍՊԸ-ն առավելագույնը 10 աշխատաքային օրվա ընթացքում պետք է ստանար նշված շտկման պահանջը, այն է՝ մինչև 31.01.2022թ., ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել: Մինչդեռ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցումը ուղարկելու դեպքում «Երվադա» ՍՊԸ-ն կստանար նշված ծանուցումը, քանի որ ՍՊԸ-ի armeps էջում խնդիրը առաջացել է ավելի ուշ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Երվադա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ մասի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն, «Էնջինիրինգ» ՓԲԸ, «Ագաթ-777» ՍՊԸ-ն և «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.02.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել սարքերի և սարքավորումների վերաբերյալ Հավելված 1.2 և ծավալաթերթ նախահաշիվը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (14.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.02.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի ervada-spy@mail.ru էլ. փոստի հասցեին:

vii. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 16.02.2022թ.-ին ժամը 16:00-ին:

viii. Հանձնաժողովի 16.02.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից շտկումներ չեն ներկայացվել:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Կարգի 42-րդ կետով և հրավերի 8.10-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

x. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանին 21.02.2022թ.-ին ուղղված գրությամբ Մասնակիցը հայտնել է, որ 2022թ.-ի փետրվարի 10-ից «Երվադա» ՍՊԸ-ին պատկանող Armeps համակարգի համապատասխան էջից որևէ տեսակի ոչ ավտոմատ ծանուցումներ Ընկերությունը չի ստացել, մինչդեռ վերջին շրջանում «Երվադա» ՍՊԸ-ն մասնակցության հայտեր է ներկայացրել բազմաթիվ պետական գնման ընթացակարգերին և վերը նշված Ընթացակարգերից չեն ստացվել որևև տեսակի ծանուցումներ կամ արձանագրություններ: Նշված խնդիրը ի հայտ է եկել այն ժամանակ, երբ զանգ է կատարվել Պատվիրատուներից մեկի ներկայացուցչին ճշտելու Ընթացակարգի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն, որին ի պատասխան համակարգողը հայտնել է, որ արդեն իսկ ուղարկվել է ոչ ավտոմատ ծանուցում բոլոր մասնակիցներին՝ այդ թվում նաև «Երվադա» ՍՊԸ-ին: «Երվադա» ՍՊԸ-ն գրեթե 1 /մեկ/ շաբաթից ավել ժամանակահատվածում չի ստանում որևէ տեսակի ոչ ավտոմատ ծանուցումներ՝ մինչդեռ վտանգված է Ընկերության հետագա գործունեությունը: Ընկերությունը ունի նաև կասկած, որ միգուցե «ջարդել են» Ընկերությանը

պատկանող Armeps համակարգի էջը, ուստի խնդրել են հանձնարարել կատարել armeps համակարգում «Երվադա» ՍՊԸ-ի էջի ուսումնասիրություն պարզելու համար առաջացած խնդրի պատճառները:

xi. Ի պատասխան Մասնակցի 21.02.2022թ.-ի գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի «ervada» մուտքանունով օգտվողի կողմից (էլ.փոստ՝ ervada-spy@mail.ru) գրությամբ ներկայացրած ժամանակահատվածում տարբեր IP հասցեներից իրականացվել են բազմաթիվ ձախողված մուտքի փորձեր, ինչի արդյունքում համակարգը ապաակտիվացրել է օգտվողի կայք-էջը:

Համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 10/02/2022թ. ժամը 15:19-ից մինչև ժամը 16:11-ը 178.176.73.225, 109.252.73.161 և 91.196.39.22 IP հասցեներից իրականացվել է թվով 28 ձախողված մուտքի փորձ, ապաակտիվացնելով կայք-էջը: Ընկերության կողմից՝ նոր գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով՝ գրավոր դիմում ներկայացնելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարությունը 10/02/2022թ. ժամը 17:50-ին ընկերությանը տրամադրել է նոր գաղտնաբառ, որով՝ նույն օրը ժամը 17:53-ին վերոգրյալ օգտվողի կողմից 91.196.39.22 IP հասցեից իրականացվել է «Խմբագրել օգտվողին», իսկ ժամը 19:11-ին և ժամը 19:21-ին «Բեռնել հայտի փաթեթը» գործառույթները: Այնուհետև, 11/02/2002թ. ժամը 09:39-ից մինչև ժամը 09:53-ը 109.252.73.161 IP հասցեից իրականացվել է թվով 70 ձախողված մուտքի փորձ՝ կրկին ապաակտիվացնելով կայք-էջը, ձախողված մուտքի փորձ է իրականացվել նաև 18/02/2022թ. ժամը 15:08-ին 46.70.132.249 IP հասցեից: Նոր գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով գրավոր դիմումի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը 18/02/2022թ. ժամը 16:18-ին ընկերությանը կրկին տրամադրել է նոր գաղտնաբառ, որով՝ նույն օրը ժամը 16:35-ին վերոգրյալ օգտվողի կողմից 46.70.132.249 IP հասցեից իրականացվել է «Խմբագրել օգտվողին», իսկ ժամը 16:40-ին «Ավելացնել օգտվող» գործառույթները՝ ընկերության կայք-էջում ավելացնելով «mhererervada2005» մուտքանունով օգտվողին (էլ.փոստ՝ ervada@mail.ru):

Տեղեկացնում ենք նաև, որ armeps համակարգից առաքվող ոչ ավտոմատ ծանուցումները ստանում են միայն ակտիվ կարգավիճակ ունեցող օգտվողները: Ուստի վերոգրյալ ժամանակահատվածում վերոգրյալ օգտվողը ոչ ավտոմատ ծանուցումներ չէր կարող ստանալ համակարգից՝ ապաակտիվացված կարգավիճակ ունենալու պատճառով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3412-2022 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը: Իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

Նույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով

սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային

փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում

սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13» ծածկագրով բաց մրցույթ գնահատող հանձնաժողովի 31.01.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել Հավելված 1.2 և ծավալաթերթ նախահաշիվը, ինչով պայմանվորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (14.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.02.2022թ.-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի ervada-spy@mail.ru էլ. փոստի հասցեին: Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ

արձանագրվել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից շտկումներ չեն ներկայացվել, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ի պատասխան Մասնակցի 21.02.2022թ.-ի գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ «Երվադա» ՍՊԸ-ի «ervada» մուտքանունով օգտվողի կողմից (էլ.փոստ՝ ervada-spy@mail.ru) գրությամբ ներկայացրած ժամանակահատվածում տարբեր IP հասցեներից իրականացվել են բազմաթիվ ձախողված մուտքի փորձեր, ինչի արդյունքում համակարգը ապաակտիվացրել է օգտվողի կայք-էջը:

Համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 10/02/2022թ. ժամը 15:19-ից մինչև ժամը 16:11-ը 178.176.73.225, 109.252.73.161 և 91.196.39.22 IP հասցեներից իրականացվել է թվով 28 ձախողված մուտքի փորձ, ապաակտիվացնելով կայք-էջը: Ընկերության կողմից՝ նոր գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով՝ գրավոր դիմում ներկայացնելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարությունը 10/02/2022թ. ժամը 17:50-ին ընկերությանը տրամադրել է նոր գաղտնաբառ, որով՝ նույն օրը ժամը 17:53-ին վերոգրյալ օգտվողի կողմից 91.196.39.22 IP հասցեից իրականացվել է «Խմբագրել օգտվողին», իսկ ժամը 19:11-ին և ժամը 19:21-ին «Բեռնել հայտի փաթեթը» գործառույթները: Այնուհետև, 11/02/2002թ. ժամը 09:39-ից մինչև ժամը 09:53-ը 109.252.73.161 IP հասցեից իրականացվել է թվով 70 ձախողված մուտքի փորձ՝ կրկին ապաակտիվացնելով կայք-էջը, ձախողված մուտքի փորձ է իրականացվել նաև 18/02/2022թ. ժամը 15:08-ին 46.70.132.249 IP հասցեից: Նոր գաղտնաբառ տրամադրելու խնդրանքով գրավոր դիմումի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը 18/02/2022թ. ժամը 16:18-ին ընկերությանը կրկին տրամադրել է նոր գաղտնաբառ, որով՝ նույն օրը ժամը 16:35-ին վերոգրյալ օգտվողի կողմից 46.70.132.249 IP հասցեից իրականացվել է «Խմբագրել օգտվողին», իսկ ժամը 16:40-ին «Ավելացնել օգտվող» գործառույթները՝ ընկերության կայք-էջում ավելացնելով «mhererervada2005» մուտքանունով օգտվողին (էլ.փոստ՝ ervada@mail.ru):

Տեղեկացնում ենք նաև, որ armeps համակարգից առաքվող ոչ ավտոմատ ծանուցումները ստանում են միայն ակտիվ կարգավիճակ ունեցող օգտվողները: Ուստի վերոգրյալ ժամանակահատվածում վերոգրյալ օգտվողը ոչ ավտոմատ ծանուցումներ չէր կարող ստանալ համակարգից՝ ապաակտիվացված կարգավիճակ ունենալու պատճառով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):*

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար, սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված գրությամբ առկա ժամանակահատվածում Մասնակիցը ոչ ավտոմատ ծանուցումներ չէր կարող ստանալ armeps համակարգից՝ ապաակտիվացված կարգավիճակ ունենալու պատճառով, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա

հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3412-2022 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/91 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**